ԿԱՐԾԻՔ

Հասմիկ Սերգեյի Սարգսյանի «Մտավոր հետամնաց կրտսեր դպրոցականների ինքնասպասարկման հմտությունների զարգացման մանկավարժական պայմանները» ԺԳ. 00. 03 «Հատուկ մանկավարժություն» (օլիգոֆրենոմանկավարժություն) մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Կրթական բարեփոխումների արդի փուլում մեծ տեղ է հատկացվում Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու հիմնահարցերին: Այս համատեքստում կարևորվում է ոչ միայն ակադեմիական կրթության կազմակերպման հիմնախնդիրների լուծումը, այլ նաև ընդհանուր առմամբ այս երեխաների սոցիալիզացիայի և ինքնուրույն կյանքին նախապատրաստման ուղղությամբ կազմակերպվող աշխատանքների մշակումն ու կատարելագործումը:

Այս համատեքստում Հ.Սարգսյանի «Մտավոր հետամնաց կրտսեր դպրոցականների ինքնասպասարկման հմտությունների զարգացման մանկավարժական պայմանները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը վերաբերում է զարգացման առնձնահատկություններ ունեցող երեխաների, մասնավորապես մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ինքնասպասարկման հմտությունների ձևավորման կարևոր հիմնահարցին:

Ինչպես հայտնի է, 2014թ-ին հանրակրթության մասին օրենքում կատարված փոփոխությունների համաձայն, ՀՀ-ում ներդրվում է համընդհանուր ներառական կրթության համակարգ, ինչի արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող բոլոր սովորողները կարող են սովորել իրենց համայնքում գտնվող հանրակրթական դպրոցներում, իսկ սա էլ իր հերթին ենթադրում է մանկավարժների վերապատրաստումներ, լրացուցիչ ուսումնական ծրագրերի, նյութերի, և մեթոդների մշակում: Այս առումով նույնպես Հ.Սարգսյանի ատենախոսական աշխատանքը արծարծում է մի կարևոր հիմնահարց՝ կրտսեր դպրոցականների ինքնասպասարկման հմտությունների զարգացման համար անհրաժեշտ մանկավարժական պայմանների մշակումը:

Վերոնշյալը փաստում է գրախոսվող աշխատանքի արդիականությունն ու սոցիալական նշանակությունը: Ատենախոսական աշխատանքը ներկայացված է համակարգչային 186 էջում, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Հ. Սարգսյանի ատենախոսական աշխատանքի վերլուծությունը վկայում է, որ հայցորդը բավականին գրագետ և գիտականորեն սահմանել է հետազոտության նպատակը, խնդիրները, վարկածը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները և հմտորեն ընտրել է առաջադրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ հետազոտության ժամանակակից մեթոդներ:

Գրախոսվող աշխատանքն ունի տեսական և գործնական նշանակություն քանի որ մանրամասնորեն վերլուծված և շարադրված է հիմնահարցի շուրջ վերջին տասնամյակների ընթացքում կատարված հետազոտություններն ու տեսական աշխատանքները, մշակված է մտավոր զարգացման խանգարումներ ունեցող կրտսեր դպրոցականների ինքնասպասարկման կարողությունների զարգացման և դաստիարակության օրինակելի

ծրագիր, որը կարող է լայնորեն կիրառվել ինչպես մանկավարժների, այնպես էլ ծնողների կողմից:

Ատենախոսն աշխատանքի առաջին գլխում վերլուծել է մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաների զարգացման օրինաչափությունները՝ ինքնասպասարկման հմտությունների ձևավորման տեսակետից, ինչպես նաև այս երեխաների կրթության կազմակերպման համար գոյություն ունեցող կրթական հաստատությունների տեսակները, ինչը բավարար հիմք է ապահովել հետազոտության հետագա ուրվագծման և իրականցվող աշխատանքների ուղղությունների նախանշման համար:

Ատենախոսության երկրորդ գլխում ներկայացված ուսումնական ծրագրերի վերլուծությունը թույլ է տվել դուրս բերել այն փաստը, որ ուսումնական ոչ մի առարկայի շրջանակում կրտսեր դպրոցականի ինքնասպասարկման հմտությունների ձևավորման և կատարելագործման առումով կոնկրետ աշխատանքներ պլանավորված չեն, ինչը, եթե նեյրոտիպիկ երեխաների դեպքում խնդիրների կարող է չհանգեցնել, ապա մտավոր խնդիրներ ունեցող երեխաների դեպքում այն խիստ կարևոր է, քանի որ երեխայի հետ դպրոցում այս հմտությունների ձևավորման ուղղությամբ աշխատանքներ չեն տարվում, իսկ ընտանիքում ծնողները հիմնականում չեն ունենում բավարար գիտելիքներ՝ այս աշխատանքները ինքնուրույն կազմակերպելու համար:

Վերոնշյալի մասին են վկայում նաև ատենախոսի իրականացրած սոցիոլոգիական հարցման և մտավոր զարգացման խանգարումներ ունեցող կրտսեր դպրոցականների ինքնասպասարկման հմտությունների ձևավորվածության վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված է ատենախոսի կողմից մշակված օրինակելի ծրագիրը, դասերի մոդելավորման օրինակներ, ինչը գործնականում այս աշխատանքները համակարգված կազմակերպելու հարցում մեծ աջակցություն է ինչպես մանկավարժների, այնպես էլ ծնողների համար: Հավելվածում ներկայացված բազմապիսի խաղերն ու վարժությունները հնարավորություն կտան մասնագետներին այս աշխատանքներն անցկացնել առավել հետաքրքիր և արդյունավետ կերպով:

Իրականացված հետազոտությունների երկարատևությունը, մասշտաբն ու ծավալը, ժամանակակից հետազոտության մեթոդների կիրառումը վկայում են հետազոտության արդյունքների հավաստի և հիմնավորված լինելու մասին: Հետազոտության արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունը ընդգծվում են նաև հայցորդի հրատարակություններով, ելույթներով և ստացված հետազոտության արդյունքների քննարկումներով:

Դրական գնահատելով ատենախոսական աշխատանքն ընդհանուր առմամբ՝ հարկ ենք համարում նշել մի քանի բացթողումներ.

1. Ատենախոսության մեջ ճիշտ չեն ներկայացված որոշ եզրույթներ, մասնավորապես ատենախոսության տարբեր էջերում (5,6,7,19 և այլն) որպես մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների կրթությունը կազմակերպող կրթական հաստատություններ ներկայացվել են հանրակրթական, ներառական և հատուկ դպրոցները, այնինչ ներառական դպրոցները նույն հանրակրթական դպրոցներն են, այն էլ այսօրվա համընդհանուր ներառական կրթության սահմանման պայմաններում: Բացի այդ, ռուսերենով ճիշտ չի օգտագործված ներառական դպրոց բառակապակցությունը՝ интегративная школа, այնինչ պետք է լիներ инклюзивная, քանի որ սրանց միջև կա իմաստային մեծ տարբերություն՝ առաջինը ցույց է տալիս

նույն հաստատությունում, սակայն առանձին խմբի առկայությունը, իսկ երկրորդը՝ հենց բուն ներառումը համադասարանացիների խմբում:

2. Թեև ատենախոսության վերնագրում կոնկրետ նշված չէ, թե մտավոր հետամնացության որ աստիճանն ունեցող երեխաներին է նվիրված հետազոտությունը, սակայն ատենախոսը բովանդակության մեջ արդեն շեշտում է, որ ուսումնասիրություններ անց են կացվել թեթև և չափավոր աստիճաների խանգարում ունեցող երեխաների հետ: Կարծում եմ առավել շահեկան կլիներ ուսումնասիրել չափավոր և ծանր աստիճանի մտավոր զարգացման խանգարում ունեցող կրտսեր դպրոցականների ինքնասպասարկման հմտությունները, քանի որ թեթև աստիճանի դեպքում, այն էլ այս տարիքում, խնդիրն այնքան սուր չի լինում արտահայտված, որքան առաջարկվող խմբում:

3. Ատենախոսության 1.2 <Թեթև և չափավոր աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող երեխաների բնութագիրը՝ ինքնասպասարկման հմտությունների դաստիրակության տեսակետից> ենթագլխում վերլուծված են մտավոր հետամնացության տարբեր դասակարգումներ և բնութագրեր, սակայն բացարձակ անդրադարձ չի կատարվել Առողջապահության համաշխարհային կազմակերպության Գործառույթների միջազգային դասակարգմանը, թեև այն մեր երկրում պաշտոնապես ընդունվել է 2014թ-ից և կիրառվում է Կրթության առնձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական կարիքների գնահատման գործընթացում ու մասնամասնորեն ներկայացնում է ինքնասպասարկման հմտությունները՝ որպես կյանքի համար կարևոր գործառույթ:

4 Ատենախոսության 2.1 ենթագլխում վերլուծված են դպրոցական տարբեր առարկաների՝ Տեխնոլոգիա, Ֆիզկուլտուրա, Մաթեմատիկա, Նկարչություն, Ես և շրջակա աշխարհը, բովանդակությունը և դրա շրջանակներում ինքնասպասարկման հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքների դրվածքը, սակայն կարծում ենք, որ այդ վերլուծությունը անհրաժեշտ էր սկսել հանրկրթական պետական չափորոշիչների վերլուծությունից, ինչը հնարավորություն կտար նախ պարզել տարրական դպրոցի ավարտին աշակերտից ակնկալվող վերջնարդյունքները, նոր միայն հասկանալ, թե դրանք որ առարկաների շրջանակում է հնարավոր ձևավորել:

5 Ատենախոսության 3.1 ենթագլխում ներկայացված է ատենախոսի կողմից մշակված թեթև և չափավոր աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ինքնասպասարկման հմտությունների և կարողությունների դաստիարակության ծրագիր, որտեղ առանձնացված են՝ անհատական հիգիենա, հագուստ և կոշիկ, սեղանի շուրջ ինքնասպասարկում, կենցաղավարման կարողություններ և հմտություններ, տարածության մեջ կողմնորոշում և հաղորդակցման մշակույթ բաժինները: Կարծում ենք, որ վերջին երկու բաժինները այնքան էլ կապ չունեն ինքնասպասարկման կարողությունների հետ, այլ ավելի շատ վերաբերում են տարածական կողմնորոշման և հաղորդակցման ոլորտներին (էջ 47,82,83): Քանի որ մշակված ծրագիրը նախատեսված է կիրառել հայալեզու դպրոցներում, կարծում ենք օգտակար կլիներ, եթե յուրաքանչյուր բաժնի համար առաջարկված մեթոդական հնարներ ենթաբաժնում ներկայացվեին ոչ միայն ռուս հեղինակների ստեղծագործություններ, այլ նաև հայ ստեղծագործողների:

6.Օգտագործված գրականության հղումները ատենախոսության մեջ նույն ձևով չեն տրված՝ որոշ էջերում նշված է հեղինակ, տարեթիվ (էջ 4, 5, 12, 17 և այլն), այլ էջերում

հղումները տրված են տողատակում (էջ 100): Առաջարկում ենք ամբողջ ատենախոսության հղումներն իրականացնել նույն ձևաչափով:

Նշված դիտարկումներն ընդհանուր առմամբ էականորեն չեն անդրադառնում ներկայացված ատենախոսության դրական գնահատականի և հայցորդի կողմից կատարված ատենախոսական աշխատանքի արժեքի վրա, այն ունի տեսական, գործնական և սոցիալական մեծ նշանակություն:

Սեղմագիրը և գիտական հրատարակությունները ամբողջովին արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Վերը շարադրվածը թույլ է տալիս անել հետևյալ ընդհանուր եզրակացությունը:

Հետազոտության թեմայի արդիականությունը, նրա նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության ստացված արդյունքների հավաստիությունը ու հիմնավորվածությունը թույլ են տալիս արձանագրել, որ Հասմիկ Սերգեյի Սարգսյանի «Մտավոր հետամնաց կրտսեր աշակերտների ինքնասպասարկման հմտությունների զարգացման մանկավարժական պայմանները» ատենախոսական աշխատանքը հանդիսանում է ավարտուն, ինքնուրույն, գիտական աշխատանք, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի 13.00.03 «Հատուկ մանկավարժություն» (օլիգոֆրենոմանկավարժություն) մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հայցորդը լիովին արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի,
մանկավարժական գիտությունների թեկնածու,դոցենտ՝ **Ա.Սվաջյան**

ստորագրությունը հաստատում եմ՝ **Մ.Իսպիրյան**

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտքարտուղար՝
մանկավարժական գիտությունների թեկնածու,դոցենտ

Ամսաթիվ 8.10.2020թ.